ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՈՐ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Ատոմ Միսիթարյան

1988թ. սկսված հայ ազգային շարժումը, 1991թ. Խորհրդային Միության վերակազմավորումը, հայկական անկախ պետականության ստեղծումն ուղեկցվեցին հասարակական կենսաձևի արմատական փոփոխությամբ: Ժամանակակից հայ հասարակությունը գտնվում է «անցումային փուլում», միաժամանակ ձևավորում է ինքնուրույն պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը: Հասարակության զարգացման այս փուլն իր անդրադարձն է գտել նաև երիտասարդության շրջանում, քանզի այն հասարակությունից մեկուսացված չէ. երիտասարդությունը հասարակության կարևոր սոցիալական-տարիքային խավ է՝ ենթահամակարգ:

1. Հայաստանի կազմակերպված երիտասարդական շարժման սկզբնավորումն ու զարգացումը

1988թ. սկիզբ առած շարժմանն ամենաակտիվ մասնակցություն ունեցավ ազգային գաղափարներով տոգորված երիտասարդությունը: Ի հայտ եկան ուսանողական մի շարք առաջնորդներ: Առավել ակտիվներն ընդգրկվում էին գործող կուսակցությունների երիտասարդական կառույցներում և համագործակցում միմյանց հետ՝ կազմելով վերքաղաքական խմբավորումներ: Քաղաքական ակտիվություն ցուցաբերած երիտասարդների մի մասը հետագայում ընդգրկվեց պետական և քաղաքական կառույցներում կամ մեկնեց սահմանները պաշտպանելու: Երիտասարդության զգալի մասը համալրեց «նախնական կապիտալ կուտակողների» շարքերը:

Արդեն անկախ պետականության պայմաններում ուսանողությունը ցուցաբերեց իր ակտիվ ու կազմակերպված լինելը: 1992թ. աշնանը ձևավորված հուժկու ուսանողական սոցիալական շարժումը հասավ իր պահանջների բավարարմանն իշխանություններից (կրթաթոշակների բարձրացում, ուսանողական տրանսպորտային զեղչեր և այլն): Շարժումը ղեկավարում էր հոկտեմբերի 30-ին կազմավորված Հայ ուսանողների խորհուրդը (ՀՈՒԽ), որի անդամները հետագայում ծնունդ տվեցին զանազան երիտասարդական-

ուսանողական կազմակերպությունների:

ՀՈՒԽ համալսարանական կորիզը 1993թ. ակտիվ մասնակցություն ունեցավ ներբուհական ուսանողական ինքնակառավարման մարմինների (արհմիություններ, ուսխորհուրդներ) ձևավորման աշխատանքներին: Ուսանողությունն արեց ինքնահաստատման քայլ՝ հանդես գալով ուսանողական խմբերի ձևով: 1994թ. մարտի 31-ին Երիտասարդական ակադեմիայի (ԵրԱկ) պաշտոնական հիմնադրմամբ սկսվում է այդ խմբերի և հոսանքների պաշտոնական կազմակերպման փուլը:

Ակտիվ ուսանող երիտասարդությունը, Երիտասարդական ակադեմիայի գլխավորությամբ, 1994թ. ևս մեկ հաղթանակ արձանագրեց. ԵՊՀ բարձր կուրսերի 9 ուսանող հանիրավի խիստ նկատողություն ստացավ, իսկ մեկը հեռացվեց համալսարանից «ուսումնական գործընթացը խոչընդոտելու» պատճառաբանությամբ: Նրանք «համարձակվել» էին ԵՊՀ-ում կազմակերպել հանդիպումներ ու կլոր սեղաններ հասարակական, պետական գործիչների մասնակցությամբ, իսկ սեպտեմբերի 9-ին՝ ուսանողական հանրահավաք՝ սեփական խնդիրների մասին բարձրաձայնելու նպատակով: Սեպտեմբերի 9-ը հռչակվեց երիտասարդության սոցիալական և քաղաքացիական իրավունքների պաշտպանության օր, որը մեծ արձագանք ունեցավ: ԵՊՀ-ից հեռացված ուսանողը վերականգնվեց, իսկ ռեկտորը պաշտոնանկ արվեց:

1995թ. գարնանը Միջազգային երիտասարդական ակումբի (ՄԵԱ) նախաձեռնությամբ կայացավ Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների առաջին համաժողովը, որի մասնակիցների զգալի մասը մասնակցեց 1995թ. սեպտեմբերի 9-ին նվիրված միջոցառումներին. ձևավորվեց Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների (ՀԵԿ) համադաշնությունը, որի պաշտոնական հիմնադրումը՝ կանոնադրության հաստատմամբ, տեղի ունեցավ 1996թ. ապրիլի 9-ին: ՀԵԿ համադաշնությունը հասարակական կարևոր ինստիտուտ էր, հասարակական կազմակերպությունների առաջին միավորումը Հայաստանում, որը համակարգում էր երիտասարդության ընդհանրական պահանջմունքները և հասարակական վերահսկողություն իրականացնում իշխանական-պետական կառույցների կողմից երիտասարդության հանդեպ վարվող քաղաքականության նկատմամբ: Այս ընթացքում վերջնականորեն ձևավորվեցին և առանձին կարգավիճակ ստացան բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինները:

Երիտասարդական շարժման կազմակերպման փուլն, ըստ էության, ավարտվեց 1997թ.՝ Հայաստանի երիտասարդության ազգային խորհրդի (ՀԵԱԽ) հիմնադրմամբ և դեկտեմբերին ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցմամբ: Սա, ըստ էության, Հայաստանի ամենաներկայացուցչական հասարակական կազմակերպությունն էր, երիտասարդ սերնդի մակարդակում քաղաքացիական հասարակության կայացման առ-

հավատչյան:

1998թ. արտահերթ նախագահական ընտրություններում արդեն գրեթե բոլոր թեկնածուների նախընտրական շտաբներում կարևոր դերակատարում ունեին կազմակերպված երիտասարդության ներկայացուցիչները: Դրանց ամենաստվար մասն աջակցում էր Ռ.Քոչարյանին, որի հաղթանակն էլ դրական հետևանքներ ունեցավ ոլորտի զարգացման համար. երիտասարդության հարցերով փոխնախարար ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի ու սպորտի նախարարությունում, ՀՀ կառավարության կողմից պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգի ընդունում, Համահայկական երիտասարդական հիմնադրամի ստեղծում և այլն:

1999թ. խորհրդարանական ընտրություններում ևս, նախորդ ընտրությունների համեմատ, երիտասարդության ներկայացուցիչները կուսակցական նախընտրական ցուցակներում զբաղեցնում էին ավելի բարձր դիրքեր: Մինչ տարեվերջ ՀԵԱԽ ղեկավար մարմնի երեք ներկայացուցիչ արդեն ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր էին:

2000թ. երիտասարդական դաշտում սկսվում է որոշակի լճացման փուլ: Երիտասարդական քաղաքականության իրականացման կառույցներն արդեն ստեղծվել և գործում էին: Սակայն, նոր, երիտասարդության համար ընդհանրական խնդիրներ գրեթե չէին առաջանում, երիտասարդական կազմակերպություններն ու ուսանողական ինքնակառավարման մարմիններն ավելի շատ զբաղված էին սեփական կառույցների ամրապնդմամբ: Կայացավ Համահայկական երիտասարդական հիմնադրամի «Հայկյան» ամենամյա մրցանակաբաշխությունը, որը մրցանակներ է շնորհում տարվա ընթացքում լավագույնս իրեն դրսևորած երիտասարդական կազմակերպությանն ու առաջնորդին, ուսանողական կառույցին ու պարբերականին, երիտասարդական ծրագրին ու նախաձեռնությանը և այլն: Պարբերական բնույթ ստացավ նախագահի հովանավորությամբ անցկացվող «Բազե» համահայկական երիտասարդական հավաքը, հիմնադրվեց «Համահայկական միջազգային երիտասարդական կենտրոն» հիմնադրամը, կազմակերպվեցին հանրապետական ու համահայկական բնույթի երիտասարդական միջոցառումներ: Երիտասարդությունը, որպես «միասնական-անկախ-ինքնություն» խավ ակտիվ հանդես եկավ 2003թ. խորհրդարանի ընտրության ժամանակ, բարձրացնելով զուտ երիտասարդական հիմնախնդիրներ:

Հայաստանում երիտասարդական հասարակական շարժման զարգացման ներկա փուլը բնութագրվում է կայունացման միտումներով, երբ թույլ, քաղաքական կոնյունկտուրայի արդյունքում ստեղծված կազմակերպությունները հետզհետե դադարեցնում են իրենց գործունեությունը, իսկ առավել ուժեղ և հասուն կազմակերպությունները երիտասարդական դաշտում ամրապնդվում և զարգացում են ապրում: Այսօր Հայաստանում գրանցված են մինչև 250 երիտասարդական հասարակական կազմակերպություն, բուհե-

րում գործում են ուսանողական ինքնակառավարման մարմիններ, պետությունն իր մի քանի կառույցներով զբաղվում է երիտասարդության հիմնախնդիրներով: Գործունեության այս դաշտն բավական ընդգրկուն է և շատ կարևոր Հայաստանի մոտ ապագան հասկանալու համար, քանզի այստեղ ընդգրկված է հայ երիտասարդ սերնդի հասարակական ակտիվություն ցուցաբերող հատվածը:

2. Հայաստանի երիտասարդական կազմակերպությունների ներկան (դաշտային հետազոտություն)

Որո՞նք են Հայաստանում գործող ամենաակտիվ և ազդեցիկ երիտասարդական կառույցների գործունեության ոլորտները, կառուցվածքի առանձնահատկությունները, ինչպիսի՞ փորձ է կուտակվել, ի՞նչ ձեռքբերումներ ունեն, ինչպիսի՞ն է միջազգային երիտասարդական համագործակցության մակարդակը: Արժեքային ի՞նչ կողմնորոշումներ ունեն երիտասարդ առաջնորդները և ինչո՞ւ են զբաղվում հասարակական գործունեությամբ, ի՞նչ կրթություն են ստացել և քանի՞ տարեկան են: Վերոհիշյալ հարցերը լուսաբանելու նպատակով սույն աշխատության շրջանակներում իրականացվել են դաշտային հետազոտություններ:

3. Մեթոդները

Նախ պետք է նշել, որ Հայաստանում որևէ օրենքով և որևէ կերպ չի սահմանվում կամ առանձնանում երիտասարդական կազմակերպությունը: Այդ իսկ պատճառով ընդգրկուն լինելու համար առավելապես կխոսենք «երիտասարդական կառույցի» մասին: Հայաստանում երիտասարդական կառույցները, որոնցում ինքնադրսևորման ուրույն ուղի է անցնում կազմակերպված երիտասարդությունը, կարելի է բաժանել մի քանի մասերի.

1. ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված հասարակական կազմակերպություններ, որոնց անվան մեջ կա «երիտասարդ» բառը,

2. ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված հասարակական կազմակերպություններ, որոնց գործունեության հիմնական թիրախը երիտասարդությունն է կամ նրա որևէ առանձնացված խումբ,

3. ՀՀ արդարադատության նախարարությունում գրանցված հասարակական կազմակերպություններ, որոնց անդամների գերակշիռ մեծամասնությունը երիտասարդ է,

4. տարբեր ուսումնական հաստատություններում, բուհերում գործող ու տվյալ հաստատության ադմինիստրացիայի կողմից ճանաչվող ուսանողական - երիտասարդական ինքնակառավարման մարմիններ՝ ուսանողական խորհուրդներ, գիտական ընկերու-

թյուններ և այլն,

5. տարբեր հասարակական և այլ կառույցներին կից գործող երիտասարդական միավորումներ (ՀԿ-ների երիտասարդական բաժիններ, եկեղեցուն կից գործող երիտասարդական կազմակերպություններ և այլն),

6. կուսակցությունների երիտասարդական թևեր,

7. ինքնուրույն գործող և որևէ տեղ չգրանցված երիտասարդական ոչ ֆորմալ խմբեր, ակումբներ ու կազմակերպություններ:

Վերը նշված յուրաքանչյուր խումբ ունի առանձնահատկություններ, որոնք կարող են ի հայտ գալ տարբեր պարագաներում և, իհարկե, ուսումնասիրվել տարբեր մեթոդներով: Սակայն, միաժամանակ, նրանք ունեն նաև որոշակի ընդհանրություններ, որոնց ուսումնասիրության համար նախ մշակվեց և քննարկումների արդյունքում վերջնական տեսքի բերվեց երիտասարդական կազմակերպությունների և առաջնորդների հարցման հարցաթերթիկը: Այնուհետև տարբեր աղբյուրներից (ՀՀ արդարադատության նախարարություն, ինտերնետ, հրատարակված տեղեկագրեր, անձնական կապեր և այլն) ձեռք բերվեց ավելի քան 200 երիտասարդական ՀԿ-ի, ուսանողական ինքնակառավարման մարմնի, կուսակցության երիտասարդական թևի, ոչ ֆորմալ երիտասարդական խմբի տվյալներ (հեռախոսահամար, էլ. փոստի հասցե, առաջնորդի տվյալներ և այլն): Հաջորդ քայլը պոտենցիալ 50 հոգանոց ցուցակի կազմումն էր, ըստ որի՝ պիտի հարցվեին երիտասարդ առաջնորդները՝ օգտագործելով հարցաթերթիկը: Ցուցակը կազմվեց՝ հաշվի առնելով որոշակի համամասնություն, այնտեղ ընդգրկել բոլոր երիտասարդական խմբերի ներկայացուցիչներին: Նրանց բոլորի հետ հարցաթերթիկի հարցերին պատասխանելու պայմանավորվածություն ձեռք բերվեց:

Հարցմանը մասնակցեցին 40 երիտասարդական ՀԿ-ների, ուսանողական ինքնակառավարման մարմնի, կուսակցության երիտասարդական թևի, ոչ ֆորմալ երիտասարդական խմբի ներկայացուցիչ-առաջնորդներ, հարցաթերթիկները հավաքվեցին և տվյալներն ամփոփվեցին:

4. Հարցաթերթիկը

Հարցաթերթիկը «թեթև» է կազմված և բաղկացած է երկու հիմնական մասից: Հարցերի առաջին խումբը վերաբերում է երիտասարդական կառույցին և անդրադառնում է նրա հիմնադրմանը, գրասենյակին ու վճարովի աշխատողներին, կազմակերպության գործունեության աշխարհագրությանը, կազմակերպության կորիզին ու դրա դինամիկային, այնտեղ ընդգրկվածների կրթությանը, կառույցի անդամներին, նրանց տարիքին, հասարակական ակտիվության մակարդակին և այլն: Հարցերի երկրորդ խումբն արդեն ուղ-

ղված է տվյալ երիտասարդ առաջնորդին և շոշափում էր նրա տարիքին ու ծննդավայրին, ամուսնական վիճակին ու հիմնական աշխատանքի վայրին, միջազգային երիտասարդական կառույցներում ընդգրկվածության վերաբերյալ հարցեր: Հարցերին պատասխանելիս, որ տևում էր միջինը 10 – 12 րոպե, որևէ դժվարություն չէր առաջանում:

5. Հիմնադրում

Երիտասարդական կառույցների հիմնադրման գործընթացը Հայաստանում սկսվեց 1990-ականներից: Դրանք առաջին հերթին տարբեր կուսակցությունների երիտասարդական թևերն էին, ինչպես նաև 1988թ. երկրաշարժի հետևանքների վերացմանն ուղղված կազմակերպությունները:

Այսպես, հարցված 40 կառույցներից 6-ը (կամ 15%-ը) հիմնադրվել են մինչև 1994թ.: Նրանցից 5-ը կուսակցությունների ներսում գործող երիտասարդական կազմակերպություններ են, մեկը՝ հաշմանդամների հիմնախնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպություն: Գործող երիտասարդական կառույցների զգալի մասը (30%-ը) հիմնադրվել է 1994-97թթ.: Այս փուլը բնութագրվում է երիտասարդական ոլորտի ակտիվ առաջընթացով: 1994թ. պետականորեն գրանցվում է առաջին երիտասարդական հասարակական կազմակերպությունը, որին հետևում են նորերը: Սկսվում է նաև բուհերում ուսանողական ինքնակառավարման մարմինների կազմավորման գործընթացը: Ընդամենը երկու տարի անց դրանց թիվն այնքան է մեծանում, որ երիտասարդական կառույցները համակարգող նոր կառույցի ստեղծման կարիք է առաջանում: Դրանում շահագրգռված էր նաև իշխող քաղաքական ընտրանին՝ ՀՀՇ գլխավորությամբ: 1997թ. վերջին, մի քանի ապարդյուն միջամտությունից, քաղաքական խորհրդակցություններից հետո ու ներքին պայմանավորվածությունների գալով՝ վերջապես գրանցվում է ավելի քան 30 երիտասարդական կառույց միավորող Հայաստանի երիտասարդության ազգային խորհուրդը (ՀԵԱԽ): Դրանով էլ կարելի է ավարտած համարել երիտասարդական ոլորտի զարգացման այս փուլը, որը կարելի է բնութագրել որպես «կազմակերպում» և որին պիտի հաջորդեին ձեռքբերումները…

1998թ. սկզբին Հայաստանում սկսվեց նախագահական ընտրապայքարը: Ինչպես արդեն նշել ենք, կազմակերպված երիտասարդության ներկայացուցիչներին կարելի էր տեսնել գրեթե բոլոր թեկնածուների նախընտրական շտաբներում, սակայն գերակշռում էին Ռ.Քոչարյանին աջակցողները: Այդ փաստը որոշիչ ազդեցություն ունեցավ երիտասարդական կառույցների հետագա զարգացման վրա, և դրանց մինչև 2000թ. ստեղծվածների (25%) մոտ կեսը հենց Ռ.Քոչարյանի վարած նոր երիտասարդական քաղաքականության արդյունք էին: Օրինակ, Համահայկական երիտասարդական հիմնադրամը կամ Հա-

մահայկական երիտասարդական միջազգային կենտրոնը: Այս ընթացքում հիմնադրվեցին երկու այլ տիպի կառույցներ ևս. առաջինը ՀԵԱԽ-ում տեղի ունեցող գործընթացների արդյունքում ՀԵԱԽ-ից «հեռացած այլընտրանքային կառույցներն» էին (ինչպես, օրինակ, Հայկական երիտասարդական կազմակերպությունների ցանցը), երկրորդը նոր՝ ինտեգրված կառույցներն են, որոնք հիմնադրվել են անցած փորձը հաշվի առնելով, արդեն որոշակի «կապիտալ» կուտակած (օրինակ՝ Երիտասարդական ակումբների դաշնությունը):

Հարցված երիտասարդական կառույցներից 12-ը ստեղծվել են 2001-ից հետո, որոնց կարելի է բաժանել երկու խմբի: Առաջին խմբում այն կառույցներն են, որոնց հիմնադիրները նախկինում ուսանողական խորհուրդների ղեկավարներ կամ ակտիվ անդամներ էին և որոնք, ավարտելով բուհը, մեխանիկորեն դուրս պիտի մնային տեղի ունեցող գործընթացներից ու, երիտասարդական դաշտում մնալու համար, ստեղծեցին «սեփական» երիտասարդական ՀԿ-ները (օրինակ, «Բաց հասարակություն», «Նոր ուժ» և այլն): Մյուս խմբում այն կառույցներն են, որոնք կարելի է բնութագրել որպես նոր սերնդի կառույցներ: Այս կազմակերպությունները ստեղծվել են որոշակի կոնկրետ խնդիր լուծելու համար կամ իրենց գործունեությամբ ուղղված են որոշակի կոնկրետ խավի: Սրանք այն կազմակերպություններն են, որոնք «զգում» են ՀԿ դաշտի զարգացման միտումները և տանում են դեպի երիտասարդական «մասնագիտական» ՀԿ-ների գոյություն:

6. Գրասենյակի գոյություն

Գրասենյակի կամ սեփական մշտական գործող հավաքատեղիի գոյությունը հասարակական կառույցի նորմալ գործունեության ամենաէական պայմանն է: Սա այն հայտանիշն է, որով կարելի է ընդհանուր առմամբ բնութագրել երիտասարդական դաշտն ու դրա կայացման աստիճանը:

Հարցված կառույցներից ընդամենը 21-ը (կամ 52.5%-ը) գրասենյակ կամ տվյալ ժամանակաընթացքի համար մշտական գործող հավաքատեղի ունի: Սա, կարելի է ասել բարձր ցուցանիշ է: Գրասենյակներ ունեն հարցված բոլոր ուսանողական ինքնակառավարման մարմինները, կուսակցությունների երիտասարդական թևերը և, իհարկե, պետությունից ֆինանսավորում ստացող երիտասարդական կառույցները (ՀԵՀ, ՀԵԱԽ, ՀԵՄԿՀ): Մնացածներից ընդամենը 5-ն են, որ գրասենյակ ունեն (օրինակ, ԵԱԴ, ԵրԻՍԱԿ, ԵՄՔԸ), որոնց կարելի է կայուն գործող երիտասարդական կառույցներ համարել:

7. Աշխատակիցների գոյությունը

Հասարակական կառույցի կենսագործունեության ոչ երկրորդական բնութագիր է

մշտական գործող աշխատակազմի գոյությունը: Չնայած Հայաստանում գործող երիտասարդական կառույցները երկար պատմություն չունեն, բայց հարցված 40-ից 17-ը (կամ 42.5%-ը) տվյալ պահին վճարվող աշխատակիցներ ունեին: Նրանցից 8-ը (կամ ընդհանուրի 20%-ը) ունեն մշտական աշխատակազմ: Այս կառույցներն ունեն կամ հիմնարար ֆինանսավորում պետբյուջեից, կամ իրականացնում են երկարատև ծրագրեր՝ «մշտական» դոնորների աջակցությամբ: Մյուս կազմակերպությունները վճարվող աշխատակիցներ կարողանում են ունենալ միայն կոնկրետ ծրագրերի իրականացման ընթացքում: Հարկ է նշել նաև, որ վճարվող աշխատակազմ ունեն այն կառույցները, որոնք արդեն գրասենյակ ունեն: Նշանակում է՝ երիտասարդական կազմակերպությունների համար, որևէ ծրագիր ունենալու պարագայում, առավել կարևորվում է գրասենյակի գոյությունը, ինչն էլ իր հերթին նպաստում է նոր ծրագրերի իրականացմանը:

8. Գործունեության աշխարհագրությունը

Հարցված բոլոր երիտասարդական կառույցները առաջին հերթին գործունեություն են ծավալում մայրաքաղաքում: Դրանցից 21-ի գործունեության աշխարհագրությունը սահմանափակվում է միայն Երևանով: Դրանք հիմնականում ուսանողական կառույցներն են ու նաև նորաստեղծ երիտասարդական կազմակերպությունները: Ավելի հին երիտասարդական կառույցներն արդեն հասցրել են տարածվել Հայաստանով մեկ, նրանց ծրագրերի ընդգրկումն ավելի լայն է: Պետք է ընդգծել, որ Երևանում գործունեություն սկսած կազմակերպությունների մեծ մասը, ամրապնդվելով, հետզհետե տարածվում է նաև մարզերում՝ իր ծրագրերում ընդգրկելով ավելի ու ավելի շատ երիտասարդներ մարզերից: Մինչդեռ հակառակի մասին, այսինքն՝ երբ մարզում ստեղծված երիտասարդական կազմակերպությունը հետագայում գործունեություն ծավալի նաև Երևանում, մեզ հայտնի չէ: Մարզային երիտասարդական կառույցներն ավելի շուտ կրկնօրինակում են հանրապետության մասշտաբով գործող կազմակերպություններին կամ իրականացնում են կոնկրետ համայնքի երիտասարդներին ներգրավող տեղական բնույթի ծրագրեր: Նրանք առավելապես հակված են համագործակցել երևանյան կառույցների հետ կամ, հնարավորության դեպքում, ընդգրկվել հանրապետական երիտասարդական կառույցներում:

Հարցված 19 կառույցի գործունեությունը չի սահմանափակվում միայն մայրաքաղաքով, իսկ նրանց կեսից ավելին մասնաճյուղեր կամ համագործակից կառույցներ ունի մարզերի մեծամասնությունում: Առավել ակտիվ են ներգրավված, օրինակ, Լոռին, Շիրակը, Վայոց ձորը, որտեղ վերջին տարիներին գործել են որոշ տեղական դոնորների գրասենյակներ և որոնք որոշակիորեն աջակցել են տեղական ՀԿ-ների (այդ թվում և երիտասարդական) զարգացմանը:

9. Կորիզը

Երիտասարդական և ընդհանրապես՝ հասարակական կազմակերպությունները կամ կառույցներն ունեն կորիզ, որը որոշում է կազմակերպության քաղաքականությունը, գործունեության հիմնական ուղղություններն ու գործընկերներին: Կորիզում են ձևավորվում նաև հիմնական գաղափարներն ու արժեքները, կորիզում ընդգրկվածներն են հանդիսանում տվյալ կառույցի «գաղափարախոսության» կրողներն ու տարածողները: Այս առումով կարևորվում է կառույցի կորիզի, դրա դինամիկայի ուսումնասիրությունը:

Հարցված երիտասարդական կառույցների կորիզում ընդգրկված երիտասարդների միջին թիվը 6 է: Նրանք տվյալ կազմակերպության առավել ակտիվ անդամներն են: Մեծամասնության մոտ կորիզը համընկնում է կանոնադրությամբ նախատեսված տվյալ կառույցի ղեկավար մարմնի անդամների հետ, սակայն կան դեպքեր, երբ կարող է, օրինակ, կորիզի անդամների ընդամենը մի մասն ընդգրկված լինել ղեկավար մարմնում, կամ՝ կորիզի անդամներից բացի, կազմակերպության ղեկավար մարմնում ընտրված լինեն նաև այլ անդամներ: Ընդ որում, կորիզում ընդգրկված երիտասարդների թիվը հաստատուն չէ, այն ժամանակի ընթացքում փոփոխվում է: Այսպես, հարցված երիտասարդական կառույցներից 25-ում (62.5%) կորիզի չափը հիմնադրումից ի վեր հաստատուն չի մնացել: Նրանցից 9-ում (22.5%) այդ ցուցանիշը մեծացել է: Սրանք հիմնականում անկախ գործող հասարակական երիտասարդական կազմակերպություններ են կամ իշխող կուսակցությունների երիտասարդական թևեր:

Կորիզի թվի նվազում նկատվել է 40%-ի մոտ: Այս խմբում ընդգրկված են հիմնականում իշխանությունից հեռացած կուսակցությունների երիտասարդական թևեր կամ նրանց կողմից հովանավորյալ երիտասարդական կազմակերպություններ: Այստեղ կան նաև «ծեր» առաջնորդներով կազմակերպություններ, որոնց աշխատանքի մեթոդներն այլևս գրավիչ չեն երիտասարդ սերնդի համար կամ, անցնելով պետական պաշտոնների և շարունակելով պահպանել իրենց դիրքերը երիտասարդական կառույցներում՝ այդ առաջնորդներն ուղղակի անգիտակցաբար խոչընդոտում են «նոր» երիտասարդների ներգրավմանն ու ակտիվացմանը: Երիտասարդական 15 կառույցի դեպքում կորիզում փոփոխություններ դեռ չեն եղել: Սրանք կամ նորաստեղծ, կամ կայուն ու միջին ակտիվություն ունեցող կառույցներն են:

Միաժամանակ հարկ է նշել, որ Հայաստանի երիտասարդական կառույցների կորիզներում ընդգրկված երիտասարդների ճնշող մեծամասնությունն ունի բարձրագույն կրթություն, իսկ երկուսում (5%) մեծամասնություն են կազմում ասպիրանտներն ու գիտությունների թեկնածուները:

10. Անդամների թիվը

Նախապես պետք է ընդգծել, որ Հայաստանում գործող երիտասարդական կազմակերպությունները բազմանդամ չեն: Այդ իսկ պատճառով, երբ դասակարգում էինք երիտասարդական կառույցներն ըստ անդամների թվի, բաժանեցինք ընդամենը 3 խմբի.

ա) մինչև 20 անդամ ունեցող,

բ) 20-ից մինչև 100 անդամ ունեցող,

գ) 100-ից շատ անդամներ ունեցող:

Առաջին խմբում ընդգրկված են կառույցների 40%-ը (16 կառույց): Սրանք հիմնականում նորաստեղծ կառույցներն են, ինչպես նաև որոշակի կոնկրետ ու մասնագիտական ուղղվածություն ունեցող երիտասարդական կազմակերպությունները, որոնց համար էական չէ մեծաքանակ անդամությունը: Կազմակերպությունների 35%-ը նշել էր, որ ունի մինչև 100 անդամ: Այս խմբում ընդգրկված են նախևառաջ փոքր կուսակցությունների երիտասարդական թևերը և մարզերում մասնաճյուղեր չունեցող երևանյան երիտասարդական հասարակական կազմակերպությունները: Ավելի քան 100 անդամ ունեցող կազմակերպությունները կազմում են հարցվածների միայն 25%-ը (10 կառույց): Այս խմբին դասվում են առաջին հերթին ուսանողական-բուհական կառույցները՝ ուսանողական խորհուրդները, որոնց ֆորմալ անդամների թիվն անցնում է 1000-ից: 100-ից ավելի անդամներ ունեն նաև մեծ կուսակցությունների կառույցներում գործող երիտասարդական կազմակերպությունները և մարզերում անդամներ ու առանձնացված ստորաբաժանումներ ունեցող երիտասարդական ՀԿ-ները:

Եթե չհաշվենք բուհական-ուսանողական կառույցները, կստացվի, որ յուրաքանչյուր երիտասարդական կազմակերպությունում ընդգրկված են միջինը ոչ ավելի քան 30 երիտասարդ: Եվ եթե այդ թիվը բազմապատկենք Հայաստանում գործող երիտասարդական կառույցների թվով, որն առավելագույնը կարող է լինել 400 (հաշվի են առնված նաև չգրանցված երիտասարդական խմբերը), ապա կստացվի, որ առավելագույնը 12000 երիտասարդ է ընդգրկված երիտասարդական ոլորտում, որը կազմում է ՀՀ-ում բնակվող երիտասարդների ընդամենը 1.5%-ը: Նշենք, որ Արևելյան Եվրոպայում այս թիվը հասնում է 25 (Լեհաստան), իսկ Հյուսիսային Եվրոպայի երկրներում՝ 85%-ի (Դանիա):

11. Տարիքը

Հարցաթերթիկը պարունակում էր նաև անդամների միջին տարիքի վերաբերյալ հարց: Ուսումնասիրությունից պարզվեց, որ երիտասարդական կառույցներում ընդգրկված է հիմնականում 20-25 տարեկան երիտասարդությունը: Եվ դա տրամաբանական է.

նրանք հիմնականում բարձր կուրսերի ուսանողներ են և/կամ բուհի նոր շրջանավարտներ: Սա այն տարիքն է, երբ երիտասարդը դեռ չի սկսել խորապես գիտակցել աշխատելու կարիքը կամ հարմար աշխատանք չի գտել և, մյուս կողմից, դեռ կարիք ունի ձեռք բերելու որոշակի հմտություններ, որոնք օգտակար են լինելու հետագա կյանքում: Հենց այդ հմտությունները ձեռք բերելու տեղ կարող է լինել երիտասարդական կազմակերպությունը, հասակակիցների հետ շփումն ու համատեղ գործունեությունը:

Հարցված կառույցներից 6-ում (15%) անդամների միջին տարիքը 20-ից ցածր է: Սրանք ուսանողական խորհուրդներն են ու մանկապատանեկան կազմակերպությունները (օրինակ, Սկաուտական կազմակերպությունը): 17.5%-ի պարագայում էլ անդամների միջին տարիքը 30 և ավելի է: Այս կազմակերպությունները հիմնականում, բացի երիտասարդության հիմնախնդիրներից, զբաղվում են նաև այլ հարցերով կամ ավելի շատ գործունեության մասնագիտական-հետազոտական ուղղվածություն ունեն: Մնացած 67.5%-ը կազմող կառույցների անդամների միջին տարիքը 20-29 է:

12. Ընդգրկվածությունն այլ կառույցներում

Երիտասարդության ոլորտին բնորոշ է վերկազմակերպական երիտասարդական կառույցների գոյությունը: Դրանք ապահովում են երիտասարդական տարբեր խմբերի, կազմակերպությունների ու հոսանքների փոխկապակցվածությունն ու համագործակցությունը, ընդհանուր քաղաքականության մշակումն ու պետության հետ երկխոսությունը: Մյուս կողմից՝ դրանք ապահովում են երիտասարդ սերնդին բնորոշ շարժունությունը, երբ մի անհատի կամ փոքրիկ երիտասարդական ակումբի ձայնը լսելի կարող է լինել և ազդեցություն ունենալ տեղի ունեցող գործընթացների վրա: Այս տիպի կառույցները կարող են գործել և՛ ազգային, և՛ միջազգային մակարդակներում:

Հարցված կառույցների 52.5%-ը (21 կառույց) այս կամ այն կերպ ընդգրկված է մեկ այլ, ավելի ընդգրկուն կառույցում: Ուսանողական ինքնակառավարման մարմինների մեծ մասն ընդգրկված է Ուսանողական ասոցիացիայի կազմում, իսկ հարցված երիտասարդական կազմակերպություններից 9-ը ՀԵԱԽ անդամ են: Շատ թույլ է միջազգային ինտեգրացիայի մակարդակը երիտասարդության կտրվածքով: Ընդամենը 5 կազմակերպություն է նշել, որ համագործակցում և կամ հանդիսանում է որևէ միջազգային երիտասարդական կառույցի անդամ:

13. Ուսուցումը

Երիտասարդական աշխատանքը ենթադրում է ուսուցում, մասնակցություն որոշա-

կի ուսուցողական ծրագրերին, որոնք նպաստում են երիտասարդական կազմակերպությունների ու ոլորտի զարգացմանը: Բազմաթիվ ու բազմաբովանդակ անվճար ուսուցողական ծրագրեր են կազմակերպում Եվրախորհրդի ու Եվրամիության երիտասարդության հետ տարվող աշխատանքներ իրականացնող կառույցները, միջազգային երիտասարդական կազմակերպությունները: Չնայած ընձեռված այսպիսի լայն հնարավորություններին՝ հարցված կառույցներից 17-ը (42.5%) ուսուցողական ծրագրերի մասնակցության փորձ ընդհանրապես չունեն: Եվ ընդամենը 3 (7.5%) կազմակերպություն է պարբերաբար մասնակցում ուսուցողական ծրագրերին: Այս ցուցանիշը մեկ անգամ ևս ընդգծում է հայկական երիտասարդական կառույցների մեկուսացվածությունը և, հետևաբար, թույլ ազդեցությունը միջազգային երիտասարդական շարժման վրա:

14. Առաջնորդները

Հայաստանյան երիտասարդական կառույցների առաջնորդների կամ ղեկավարների առանձնահատկությունները հաշվի առնելով՝ կարելի է նրանց բաղդատել ըստ տարբեր հատկանիշների: Հարցաթերթիկի «առաջնորդին» վերաբերող հարցերին պատասխանելիս նկատի ենք ունեցել կազմակերպության ֆորմալ առաջնորդին՝ ընտրված նախագահին, նշանակված տնօրենին: Հարցված կառույցների ղեկավարների միջին տարիքը 29 է, մինչդեռ կազմակերպություններում ընդգրկվածների միջին տարիքը 20-25 է:

Առաջնորդների գենդերային կազմը 33:7 է՝ հօգուտ տղամարդկանց: Տոկոսային առումով կանայք կազմում են առաջնորդների ընդամենը 17.5%-ը, չնայած ակտիվ անդամների կեսից պակաս չեն:

Շատ հետաքրքիր է երիտասարդ առաջնորդների կազմն ըստ ծննդավայրի: Հարցվածներից միայն 22-ն (55%) են ծնվել Երևանում: 5-ի ծննդավայրը Հայաստանի հյուսիսում է (Շիրակի, Լոռու, Տավուշի մարզեր), 6-ը ծնվել են կենտրոնական մարզերում (Արագածոտն, Կոտայք, Արարատ, Գեղարքունիք), իսկ 4-ը՝ հարավում (Վայոց ձոր, Սյունիք, Արցախ): Հատկանշական է, որ երիտասարդ առաջնորդներից 2-ի ծննդավայրը արտերկրում է:

Բարձրագույն կրթություն ունի հարցվածների 97.5%-ը, 8-ը ասպիրանտ կամ արդեն գիտությունների թեկնածուներ են:

Ամուսնացած են 18-ը (45%), որը տրամաբանական է՝ հաշվի առնելով առաջնորդների միջին տարիքը՝ 29:

Առաջնորդներից 10-ի (25%) զբաղմունքը առավելապես ՀԿ-ն է, 11-ը պետական ոլորտի ծառայողներ են, 5-ը զբաղված են տնտեսական ոլորտում կան սեփական գործ ունեն, մնացած 14-ը (35%) զբաղվում են գիտական, մանկավարժական կամ մասնագիտական գործունեությամբ կամ ուսանողներ են:

Առաջնորդներից 12-ը (30%) օտար լեզվի հետ կապված որոշակի դժվարություններ ունեն, իսկ ինտերնետ օգտագործում են շաբաթական 1 ժամից պակաս: Նրանց ղեկավարած կազմակերպությունները հիմնականում թույլ են զարգացած: Մյուս կողմից, առաջնորդների 30%-ը ակտիվ տեղեկացված է՝ տիրապետում է որևէ օտար լեզվի՝ ռուսերենից բացի, ինչպես նաև պարբերաբար օգտվում է ինտերնետից:

Ամփոփում

Հասարակությունում սերնդափոխության տեմպերը, ուղղվածությունն ու արդյունավետությունը կախված են այն բանից, թե որքան ակտիվ ու խորն է երիտասարդների ընդգրկվածությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում: Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքին երիտասարդ սերնդի մասնակցությունը սոցիալական ինտեգրացիայի ընդգրկուն գործընթաց է, որը նպաստելու է հասարակության բարգավաճմանը՝ որպես ամբողջական համակարգ, և երիտասարդության բարգավաճմանն ու զարգացմանը՝ որպես հասարակության կարևոր ենթահամակարգ: Ավելին, այն նպաստելու է յուրաքանչյուր երիտասարդի ու անհատների յուրաքանչյուր հանրույթի բարգավաճմանը՝ լինի դա ընտանիք, աշխատանքային կամ ուսումնական կոլեկտիվ, թե տարածքային հանրույթ, որոնք իրենց փոխհարաբերություններով հենց կազմում են մեր ժամանակակից հասարակությունը:

Մեր այս հետազոտությունը փոքրիկ քայլ է հասկանալու հասարակական ակտիվություն ցուցաբերող երիտասարդներին՝ կազմակերպված երիտասարդությանը, ինչպես նաև կարևորել այս ոլորտը որպես հետազոտության սուբյեկտ: